ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն209-Ա
«01» նոյեմբեր 2022Թ

ԷՄԱՆՈՒԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2022 թվականի մարտի 9-ի թիվ 80-Ա որոշման 1-ին կետը, ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոսի միջնակարգ, Սերսի հիմնական, Բարձրունու միջնակարգ դպրոցների կոլեգիալ կառավարման միացյալ խորհրդի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N1 գրությունը և Էմանուել Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի նոյեմբերի 2-ից Էմանուել Հարությունյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզի «Սերսի հիմնական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2022 թվականի նոյեմբերի 2-ից ՀՀ Վայոց ձորի մարզի «Սերսի հիմնական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի տնօրենի

ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Մուրադյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծել նրա հետ կնքած 2022 թվականի մարտի 9-ի N493 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի «Սերսի հիմնական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ -ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

11/1/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ նոյեմբերի 1-ի
N 209Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՍԵՐՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Տատյանա Պոլուդնիցինա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անդամներ՝

Նարինե Մաղաքյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Աննա Սաֆարյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ